ՀՀ-ՈՒՄ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼԸ

5 հարցերի կարճ պատասխաններ

1 Որո՞նք են ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստանալու հիմքերը:

ա) Ազգությամբ **հայ** լինելը,
բ) ՀՀ-ում **ձեռնարկատիրական գործունեություն** իրականացնելը,
գ) ՀՀ-ում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող **ամուսնու կամ մերձավոր ազգականների** (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) **առկայությունը,** Հայաստանի Հանրապետությունում բնակարանով ու գոյության միջոցներով **ապահովվածությունը** և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն **երեք տարի** Հայաստանի Հանրապետությունում բնակվելը:

2 Ի՞նչ ժամկետով է տրվում մշտական կացության կարգավիճակը:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է **մինչև 5 տարի ժամկետով՝** յուրաքանչյուր անգամ **5 տարով երկարաձգելու հնարավորությամբ**: Մշտական կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը պետք է ներկայացվի կարգավիճակի ժամկետը լրանալուց **առնվազն 30 օր առաջ:**

3 Ո՞վ է տրամադրում մշտական կացության կարգավիճակը:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը:

Հասցե՝ **ՀՀ, Երևան, 0054, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք**



4 Որքա՞ն է մշտական կացության կարգավիճակ ստանալու համար պետական տուրքը:

140,000 ՀՀ դրամ:

5 Ի՞նչ փաստաթղթեր/տեղեկություն է անհրաժեշտ ներկայացնել:

Մշտական կացության կարգավիճակ ստանալու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,
բ) դիմում-հարցաթերթիկ,
գ) 3.5 x 4.5 մմ չափսի երեք գունավոր լուսանկար,
դ) անձնագիրը, անձնագրի պատճենը և անձնագրի նոտարական կարգով վավերացված **հայերեն թարգմանությունը,**
ե) առողջական վիճակի մասին տեղեկանք,
զ) Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու հանգամանքը պարզելու համար ներկայացվում են նաև դիմումատուի ծննդյան վկայականի, ծնողների անձնագրերի և ծնողների ամուսնության վկայականի պատճենները,
է) ՀՀ-ում օրինական հիմքով բնակվելը հավաստող փաստաթուղթ՝ ՀՀ մուտքի վիզա, կացության քարտ, ՀՀ հատուկ անձնագիր, սահմանային վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից անձի փաստաթղթում ՀՀ մուտք գործելու մասին կատարված նշումը,
ը) պետական տուրքի վճարման անդորրագիրը (մինչև 18 տարեկան անձանց դեպքում պետական տուրք չի գանձվում);

Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) հանգամանքը **հիմնավորող փաստաթղթեր՝**

ա) ազգությամբ հայի դեպքում՝ ազգությամբ հայ լինելը հավաստող փաստաթղթերից որևէ մեկը,
բ) ձեռնարկատիրական գործունեության դեպքում՝ ձեռնարկատիրական գործունեությունը հավաստող փաստաթղթեր,
գ) ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում հատուկ կարգավիճակ ունեցող օտարերկրացու մերձավոր ազգականի դեպքում՝ ազգակցական կապը հավաստող փաստաթուղթը, ՀՀ քաղաքացու անձնագիրը, հատուկ անձնագիրը, առնվազն երեք տարի ՀՀ տարածքում բնակվելը հավաստող փաստաթուղթը:

Բոլոր **օտարալեզու փաստաթղթերը** պետք է լինեն օրենքով սահմանված կարգով հաստատված և նոտարական վավերացմամբ **հայերեն թարգմանությամբ:**